ԱՆՀԱՏԸ ԵՎ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՇԱՀԸ

(Հայ բարեգործական ընդհանուր միության հիմնադիրները)

Է. Լ. ՄԵԼՔՈՆՅԱՆ

Հայ բարեգործական ընդհանուր միությունը (ՀԲԸՄ) ամենահին և ամենախոշոր հայկական բարեգործական կազմակերպությունն է։ Այսօր նրա անդամների թիվը 22 հազ. է, 20-ից ավելի երկրների 62 քաղաքներում գործում են ՀԲԸՄ մասնաճյուղերը, կենտրոնները և գրասենյակները։ Նրա՝ թվով 27 կիրակնօրյա, նախակրթական և երկրորդական դպրոցներում ուսանում են 6773 աշակերտ, որոնցից 423-ին հատկացվում է կրթաթոշակ, իսկ Հայաստանի Ամերիկյանի Համալսարանի ուսանողների թիվը հասնում է 800-ի։ Միությունը հրատարակում է մի շարք ամսագրեր („AGBU News magazine" „Ararat magazine", «Խոսնակ», «Հուշարար-Միութիւն» և այլն), ինչպես նաև առանձին մենագրություններ։ Վերջին հինգ տարիներին Հայաստանում ՀԲԸՄ-ի գործունեության ընթացքում ստեղծվել են այնպիսի կարևորագույն հաստատություններ, ինչպիսիք են Հայաստանի Ամերիկյան Համալսարանը, պլաստիկ վերականգնողական վիրաբուժության կենտրոնը (Երևանում), մթերանոց-սառնարանը (Գյումրիում), Արվեստի ակադեմիան, Սևանի Վազգենյան հոգևոր ճեմարանը, Նորք, Արաբկիր և Մալաթիա հայորդաց տները։ Միությունը նաև ֆինանսական և տեխնիկական օժանդակություն է ցույց տալիս Հայաստանի ֆիլհարմոնիկ նվագախմբին, ԳԱԱ ցեղասպանության թանգարան-ինստիտուտին, Երևանի պետական համալսարանին, Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանին և այլն։ 1994 թ. ՀԲԸՄ բյուջեն կազմել է 24 մլն. դոլար[1]։

Միության սկիզբը դրվեց 1906 թ. մի փաստաթղթով, որը իրավամբ դարձել է հայ ժողովրդի, մասնավորապես հայ սփյուռքի, պատմության կարևոր վավերագրերից մեկը։

«Այսօր, 15 ապրիլի, 1906, Ս. Զատկի առաջին օրը, ստորագրյալներս համախմբված Գահիրե, Վսեմ. Պողոս փաշա Նուպարի բնակարանը, կազմեցինք ընկերություն մը Հայկական Բարեգործական Ընդհանուր Միություն անվամբ համաձայն տրամադրության և պայմաններուն ներկա կանոնագրիս, որը կը կրե այսօրվան թվականը և մեր ստորագրությունները։

Ընկերությանս վարչական առաջին ժողովը բաղկացած է՝ կանոնագրին 10-րդ հոդվածին մեջ նշանակված տասը անդամներեն և այսօրվընե Ընկերությունս կազմակերպված հռչակած է։

Գահիրե, 15 Ապրիլ 1906

Յակուպ Արթին փաշա	*Պողոս Նուպար փաշա*
Երվանդ Աղաթոն պեյ	*Առաքել Նուպար պեյ*
Մ. Անդրանիկյան	*Տոքդ. Ն. Տաղավարյան*
Մ. Մարկոսոֆ պեյ	*Գրիգոր Եղիայան*
Կ. Շերիտճյան պեյ	*Հ. Հակոբյան»*

Նորաստեղծ կազմակերպության նպատակն էր.

«Ա.—Բնագավառի հայ ժողովուրդին մտավոր և բարոյական զարգացմանը նպաստել

---

[1] AGBU News magazine, 1995, vol 5, № 3, p. 2.

Բ.—Անոր նյութական և տնտեսական կացությունը բարվոքելու աշխատիլ
Գ.—Այս արդյունքը առաջ բերելու ծառայող ոևէ ձեռնարկ կամ հրատարակություն քաջալերել»։ Այդ նպատակների համար «Հ.Բ.Ը. Միությունը, հօգուտ հայրենի հողին հավատարիմ մնացած հայ ժողովուրդին, կը հիմնե կամ նպաստով կօժտե վարժարաններ, մատենադարաններ, արհեստանոցներ, աշխատանքի տուներ, հիվանդանոցներ, խնամատուններ, որբանոցներ և ուրիշ նմանօրինակ ազգային հաստատություններ։ Կօգնե բնագավառի կարոտ Հայրուն՝ առանց դավանանքի և այլ խտրության։ Կը պաշտպանե գյուղացիները, անոնց հայթայթելով հող, սերմնցու, կենդանի և գործիք։ Կը քաջալերե տեղական արհեստագործությանց զարգացումը, կը տարածե գյուղատնտեսական արդիական գիտելիքները, կը ստեղծե աշխատության և արդյունաբերության նոր միջոցներ։ Սովե, հրդեհե և ուրիշ ոևէ աղետքե արկածյալներուն անմիջական օգնություն կը հասցնե»[2]։

Ովքե՞ր էին այդ մարդիկ, որոնք ապրելով հայրենիքից հեռու, հիմնեցին մի կազմակերպություն, որը հավատարիմ մնալով իր նպատակներին ու սկզբունքներին, անընդմեջ գործում է շուրջ ինը տասնամյակ։ XIX դ. կեսերին Եգիպտոսում պետական բարձր պաշտոններ զբաղեցնող առաջին հայերից էր Պողոս բեյ Յուսուֆյանը (1768—1844), որն իր կյանքի վերջին տարիներին այդ երկրի արտաքին գործերի և առևտրի նախարարն էր։ 1843 թ. նա Արտաքին գործերի նախարարության դիվանատան քարտուղարի պաշտոնով Եգիպտոս է հրավիրում իր քրոջ որդուն՝ Նուբար Նուբարյանին, որը հետագայում դարձավ Եգիպտոսի ամենաակնավոր պետական գործիչներից մեկը և պատմության մեջ մտավ Նուբար փաշա անունով (1825—1899 թթ.)։ Նրա որդին էր Պողոս Նուբարը (1851—1930), ՀԲԸՄ հիմնադիրն ու առաջին նախագահը։ Ինչպես իր հայրը, նա ևս կրթություն ստացավ Ֆրանսիայի և Շվեյցարիայի երկրորդական վարժարաններում, ապա ուսումը շարունակեց Փարիզի Ecole Centrale-ում՝ ճարտարագետ-երկրաչափի մասնագիտությամբ, որն ավարտելուց հետո որոշ ժամանակ իր մասնագիտությամբ աշխատեց Ֆրանսիայում։ 1900 թ. Փարիզի, իսկ 1906 թ. Միլանի միջազգային ցուցահանդեսներում իր ստեղծած երկրագործական մեքենայի համար նա արժանացավ ոսկե մեդալների, ապա հաջորդաբար նրան շնորհվեցին ֆրանսիական Պատվո լեգեոնի ասպետական խաչ և սպայության աստիճան։ Այդ նույն տարիներին Պողոս Նուբարը մասնակցեց նաև Երկրագործական միջազգային ինստիտուտի հիմնադրմանը, որը մեծապես նպաստեց այդ բնագավառի զարգացմանը տարբեր երկրներում։ Վերադառնալով Եգիպտոս, նա ծառայության անցավ պետական հիմնարկներում և շուրջ յոթ տարի (1891—98 թթ.), որպես ընդհանուր տնօրեն, գլխավորեց Եգիպտոսի երկաթուղիների կազմակերպությունը։ Այդ տարիներին Եգիպտոսը, ըստ էության, դարձել էր Անգլիայի գաղութը, որի հետևանքով գրեթե բոլոր բնագավառները, հատկապես երկաթուղային, գտնվում էին անգլիացիների հսկողության տակ։ Պողոս Նուբարը չցանկանալով ենթարկվել և ընդվզելով նրանց ու ամեն կարգի միջամտությունների դեմ, ներկայացրեց իր հրաժարականը։ Նույնիսկ Եգիպտոսի խդիվ Աբբաս փաշայի խնդրանքը՝ հետ վերցնել հրաժարականը, չազդեց նրա որոշման վրա, դեռ ավելին՝ այդ դեպքից հետո նա այլևս երբեք չծառայեց պետական հիմնարկներում։ Հետագա տարիներին Պողոս Նուբարը դրսևորեց իր՝ ֆինանսիստի և կազմակերպչի հմտությունները։ Այսպես՝ նա հիմնեց Ալեքսանդրիայի տրամվայների և Մինզելեի հողերի շահագործման ընկերությունները, տարիներ շարունակ որպես ամենամեծ բաժնետեր և տնօրեն գլխավորեց Կահիրեի ջրի ընկերությունը, որը հիմնել էր դեռ իր հայրը և որը կարևոր նշանակություն ուներ Եգիպտոսի նման մի երկրի համար։ Բելգիացի հայտնի դրամատեր Պ. Անբենի հետ միասին նա հիմնեց Հելիոպոլիս քաղաքը և մի շարք խոշոր ու շահութաբեր ընկերություններ։ Նա Եգիպտոսի

---

2 Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության Ոսկեմատյանը (այսուհետև՝ ՀԲԸՄՈ), 1906—1913, Կահիրե, 1913, էջ 30։

շուրջ 20 ամենախոշոր բանկերի և ընկերությունների վարչությունների նախագահն էր։ Չնայած Պողոս Նուբարը հրաժարվել էր սեփական հիմնարկներում ծառայելուց, նրա բերած նպաստը Եգիպտոսի առաջադիմության գործին այնքան մեծ էր և ակնհայտ, որ մինչև իր կյանքի վերջին օրերը վայելեց Եգիպտոսի իշխանությունների վստահությունն ու հարգանքը։ Պողոս Նուբարը պարգևատրվել է Եգիպտոսի ամենաբարձր՝ «Մեճիտիյե», «Օսմանիյե», «Նեղոս» պատվոնշաններով։ Ավելորդ չէ նշել, որ Եգիպտոսի սուլթան Հյուսեին Ա-ն (1914 թ., Կահիրեում) և թագավոր Ֆուադ Ա-ն (1926 թ., Փարիզում) հյուրընկալվել են նրա բնակարանում, մի բան, որը հակառակ էր և խորթ արևելյան բարքերին և բացառիկ պատիվ՝ անպաշտոն անհատի համար[8]։

Հայտնի է, սակայն, որ նման բնութագրերը (բարձր դիրք, պաշտոն, հարստություն և այլն) միշտ չէ, որ ենթադրում են նույն այդ մարդու գործունեությունը՝ ի նպաստ իր ազգին։

Մեր պատմությունը լեցուն է նման օրինակներով՝ սկսած հայկական ծագում ունեցող բյուզանդական կայսրերից, վերջացրած նախկին Խորհրդային Միության ղեկավարության անդամներով։ Սա ընդհանրապես շատ բարդ և միաժամանակ շատ հետաքրքիր մի երևույթ է, որի լուսաբանումը պահանջում է տարբեր գործոնների հաշվառում։ Նախ պետք է նշել, որ նման անհատների հանդեպ պետականություն ունեցող ժողովուրդների և ազգային փոքրամասնությունների վերաբերմունքը բավական տարբեր է։ Մի դեպքում նման անհատները հասարակության մնացած անդամների կողմից, ընդհանուր առմամբ, դիտվում են որպես սեփական հաջողությունների երաշխիք, որպես կենսագործունեության հնարավոր նպատակ և այդ առումով որոշակիորեն խթանում են վերջինների սոցիալ-տնտեսական ակտիվությունը։ Ինչ վերաբերում է ազգային փոքրամասնություններին, երբ տվյալ ժողովուրդը կամ նրա առանձին հատվածները գործառում են սոցիալ-քաղաքական, իսկ որոշ դեպքերում նաև տնտեսական ենթակայության պայմաններում, այս դեպքում հիմնական զանգվածի վերաբերմունքը ազգակից հարուստ կամ հայտնի անհատների հանդեպ, որպես կանոն, ընդունում է սոցիալական և ազգային ակնկալումների ձև։ Մինչդեռ, նման ամեն մի անհատ ոչ միայն առանձնանում է հայրենակիցների ընդհանուր զանգվածից, այլ հաճախ հակառակվում է վերջիններին։ Նման անհատականության տեր մարդիկ, ազգային փոքրամասնության ներկայացուցիչ լինելով հանդերձ, գրավում են բարձր դիրք սոցիալական հիերարխիայում։ Եվ հենց իրենց բարձր դիրքի, պաշտոնի կամ հարստության պատճառով հայտնվում են ընդհանուր զանգվածի ուշադրության կենտրոնում, որը և (զանգվածը) գրեթե անմիջապես՝ ուղղակի կամ միջնորդավորված ներկայացնում է որոշակի պահանջներ, այն է՝ իր բոլոր կարողությունները ծառայեցնել հօգուտ հայրենակիցների, հայրենիքի։ Այդ առումով հատկանշական է հետևյալ հատվածը Վ. Մալեզյանի հիշողություններից։ «...Նուպարներու ապարանքը մտնելը ավելի դժվար էր հայու մը համար, քան Խտիվին պալատը ու վերջը նույնպես տեսա, որ ինչքան Կյուլպենկյան խույս կուտար հայերու ներկայութենեն և պինդ կը փակեր իր ապարանքի դուռները, միշտ այն մտածումով, որ հայ մը անպայման իր դրամին ու դիրքին համար կը դունկա իրեն մոտենալ»[4]։ Թվում է, ժողովրդի նման պահանջը արդարացի է, սակայն միայն այն դեպքում, երբ ուղղված է սոցիալական հաստատություններին, որոնք ստեղծվում են այդ նպատակով։ Իսկ անհատի դեպքում դա առնվազն իրատես չէ, քանի որ անհատի նման պատրաստակամությունը կամ դրա բացակայությունը պայմանավորված են տարբեր գործոններով։ Կարևոր է նշել այն հանգամանքը, որ հարուստ և հայտնի

---

8 Ա. Հ. Գարտաշյան, Նյութեր Եգիպտոսի հայոց պատմության համար, հ. Գ, Վենետիկ-Ս. Ղազար, 1987, էջ 176—187, Ջերտուշտ, Նուպար փաշա, 1920, էջ 29—35, Ա. Թերզիպաշյան, Նուպար, Փարիզ, 1939 և այլն։

4 Վ. Մալեզյան, Բարեգործականի նախագահները (անձնական տպավորություններ և պատմական գրվագներ), 1943, էջ 2 (ձեռագիր, ՀԲԸՄ արխիվ)։

հայերը, մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում, միայն Հայաստանի սահմաններից դուրս, տարբեր երկրներում էին, որն է՛լ ավելի հավանական էր դարձնում մի կողմից նրանց օտարացումը հարազատ ազգային մշակույթից, մյուս կողմից՝ այլ մշակույթի և արժեքների որդեգրումը։ Պետք է նկատի առնել նաև այն, որ նման անհատների հարուստ կամ հայտնի լինելը արդյունք էր և՛ մի գործունեության, որն ընթանում է ասպնջական ժողովրդի, հասարակության միջավայրում, այլ ոչ՝ զուտ հայկական։ Իսկ դա իր հերթին նպաստում է վերազգային մտածելակերպի և գործելակերպի ձևավորմանը, այդ հասարակության նկատմամբ բարոյական պարտականության զգացումի առաջացմանը։ Այդ առումով արդարացի էր Գ. Կյուլպենկյանը, երբ «...կըսեր հաճախ, թե միայն հայերուն չէ, որ պարտի նպաստել, այլ և օտարներուն, որոնցմե միայն շահած է և որոնց հետ գործի կապեր ունի»[5]։

Եթե այս ամենի լույսի տակ անդրադառնանք Պողոս Նուբարի ազգային նկարագրին, ապա զարմանալի չէր լինի, եթե այն կրեր զուտ խորհրդանշական բնույթ։ Հիշենք, որ նա իր ուսումը ստացել էր Եվրոպայում, գրեթե չէր տիրապետում հայերենին (միայն հետագայում, ՀԲԸՄ նախագահ դառնալուց հետո, շնորհիվ իր գործակիցների, որոշ չափով տիրապետեց լեզվին՝ խոսակցականի սահմաններում, որպես գործարար մարդ կապված էր օտարագգիների հետ և իր ապրելակերպով իսկական եվրոպացի էր։ «Անիկա (Պողոս Նուբարը—Մ. Է.), բնավ արևելցի, քիչ հայ է, անպատեհություն մը դեռևս ազգային տեսակետեն, վասնզի ատով փաշան անկարող կըլլա երբեմն թափանցելու մեր մասնավոր հոգեբանական վիճակներուն, բայց ինչ որ անհատական արժանիքին համար անժխտելի առավելություն մըն է՝ Պողոս փաշա, իմացականորեն, կատարյալ եվրոպացիի, իմա՛ ֆրանսացիի տիպար մը կը ներկայանա»[6]։

Խիստ կարևոր է նաև հետևյալ փաստը, որը կապված է նրա հոր՝ Նուբար փաշայի հետ։ Ինչպես հայտնի է, 1878 թ. հրավիրվեց Բեռլինի կոնգրեսը՝ Սան-Ստեֆանոյում մինչ այդ կնքված ռուս-թուրքական պայմանագրի վերանայման նպատակով, քանի որ այն, եվրոպական պետությունների կարծիքով, չափազանց ուժեղացրել էր Ռուսաստանի ազդեցությունը Բալկաններում և Փոքր Ասիայում։ Եվ քանի որ Սան-Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածը վերաբերում էր Արևմտյան Հայաստանին, այդ հարցը նույպես պետք է քննարկման առարկա դառնար Բեռլինում։ Այդ իսկ պատճառով, Բեռլին մեկնեց նաև հայ ազգային պատվիրակությունը՝ Մ. Խրիմյանի գլխավորությամբ։ Պատվիրակությունը Փարիզում հանդիպում է Նուբար փաշային և ծանոթացնում նրան ներկայացվելիք հուշագիր-ծրագրի հետ։ Նուբար փաշան իր հերթին քննարկում է այն Բիսմարկի և Լորիս-Մելիքովի հետ. «...երբ մեծանուն դիվանագետներ Պիզմարք, Մելիքոֆ և Նուպար փաշա տեսած էին այն ձախորդ ծրագիրը որ կը գտնվեր պատվիրակներուն ձեռքը, երեքն ալ կրկնած էին, թե այս ծրագիրը պարզապես երևակայական է և իրենք կուզեն ներկայացնել ուրիշ ծրագիր մը...»[7]։ Բայց թե ինչպես էին զարգացել հետագա դեպքերը, դրա մասին տարիներ անց վերհիշում է Մ. Խրիմյանը (արդեն ընտրվել էր Հայ առաքելական եկեղեցու կաթողիկոս) Նուբար փաշային ուղղած իր նամակում. «...Հուշ առնեմ Ձեզ, Վսեմ. Տեր, որ 17 տարի առաջ ի Փարիզ գտնվեցա մեր թարգման Պ. Ձերազին հետ, և ես իբրև պատգամավոր հայոց՝ Ներսես պատրիարքի կողմեն, մի հիշատակագիր մատուցի Ձերդ Վսեմության, որ պարունակում էր հայկական մի նոր խնդիր և զոր պիտի մատուցանեի Պերլինի վեհաժողովին։ ...Դուք ամենայն սիրով ընդունեցիք այս խնդիր և հաճեցայք զայն ուշադրության առնել։ Ուստի վերծանելով այդ Հի-

---

5 Վ. Մալեզյան, Խորհրդապահական հուշագրություն նախագահ Գալուստ Կյուլպենկյանի մասին, 1944, էջ 1 (ձեռագիր, ՀԲԸՄ արխիվ)։

6 ՀԲԸՄՌ, էջ 27։

7 Վ. Ջարգարյան, Նուպար փաշա, (Հիշատակարան (1812—1933), հ. Գ, Կահիրե, 1934, էջ 26—64)։

շատակագիրը, Դուք զայն անհարմար և չափազանց զտաք։ Ուստի մի այլ նոր Հիշատակագիր կազմեցիք, Ձեր իմաստուն հեռատեսությամբ չափավորելով և հնարավոր դարձնելով խնդիրը։ ...Այդ նոր չափավորյալ Հիշատակագիրը ես հղեցի ի Պոլիս՝ Ներսես պատրիարքին։ Այլ ավաղ, թե ինք և թե իր մտերիմ խորհրդակիցներն՝ ամենայն համառությամբ պնդեցին, որ Հիշատակագիրն անփոփոխ մնա և այնպես մատուցվի վեհաժողովին։ Այս որոշման հեռագիրը ես ի Պերլին ստացա, սաստիկ վիշտ զգացի, այնպես, որ առանձին քաշվելով լացի տղու նման, վասն զի քաջ նկատեցի բանին վախճանը։ ...Ես չեմ կարող մոռնալ այս դեպքը։ Եթե Ձեր Վսեմությունը Պերլին գտնվեր և Ձեր հորինած Հիշատակագիրը մատուցվեր վեհաժողովին, ես այնպես կը հավատամ, որ 61-րդ հոդվածն այնպես թույլ, անորոշ կերպով չէր արձանագրվեր, այլ ավելի զորավոր, վճռական ու գործնական»[8]։ Իսկ ինչ է գրում Նուբար փաշան. «1878 թ. Փարիզ կը գտնվեի։ Ներսես պատրիարքին ուղարկած չորս պատվիրակները եկած էին զիս տեսնելու, խորհուրդ և նպաստ խնդրելու համար։ Ես իրենց թելադրեցի, որ պատվիրակությունը ինձի հանձնեին և ես բոլոր՝ ծախքերը և ավելին իսկ ընելու հանձնառու կըլլայի։ ...Թողուցեք ինձ, որ ջանամ ընդունիլ տալ և կիրարկել իմ վարչական համեստ ծրագիրս։ Անգլիական պատվիրակներ՝ լորտ Պիքընսֆիլտ և Սալըզպրրի, Պիզմարք և նույնիսկ ռուսական պատվիրակները բարեկամներս են։ Գործունեցած եմ անոնց հետ, լավ կը ճանչնան զիս ու կը սիրեն, և ես կրնամ ընդունիլ տալ իմ չափավոր ծրագիրս՝ Հայաստանի վեց նահանգներուն մեջ Դատարանական Բարեկարգություն. այսինքն դատաստանական հավասարություն հայերուն և իսլամներուն միջև։ Ես իսկ հանձնառու կըլլամ ներմուծել այդ բարեկարգությունները։ Ասիկա բոլոր մեր պահանջներուն գոհացում կու տա...

Հայ պատվիրակները համոզվեցան, հաճեցան և մեկնեցան Պերլին, ուրկե պիտի հեռագրեին անհապաղ՝ որ ես ալ ճափա ելլեի։ Սպասեցի հինգ օր, ութ օր։ Երկու շաբաթ վերջ նամակ մը ստացա փոխանակ հեռագրի։ Ստորագրողն էր Մինաս Ձերազ, քարտուղար հայ պատվիրակության։ Պարունակությունը լակոնական էր և այս.—Ազգը չի ճանչնար ձեզ իրեն ներկայացուցիչ և մենք ենք անոր պատվիրակները Պերլինի Վեհաժողովին»[9]։ Վեհաժողովի կազմակերպիչ-պետությունները հայ պատվիրակությանը մասնակից չդարձրին վեհաժողովի նիստերին, ներկայացված «երևակայական» ծրագիրը ընդհանրապես չքննարկվեց, իսկ Սան-Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածը փոխարինվեց 61-րդ հոդվածով, ուր խոսվում էր «բարելավումների և բարենորոգումների» մասին՝ Օսմանյան կայսրության հայաբնակ մարզերում։

Միամտություն կլիներ կարծել, որ Նուբար փաշայի ծրագիրը ի վիճակի էր որևէ էական կամ ծանրակշիռ փոփոխություն մտցնել Հայկական հարցի հանդեպ տերությունների վերաբերմունքի մեջ։ Խոսքն այստեղ վերաբերում է առավել իրատես ծրագրի, որ չէր կարող ներկայացնել կղերական դիվանագիտությունը։

Հայ եկեղեցին, որ այդ ժամանակ պատմական ճակատագրի բերումով դարձել էր հայ ժողովրդի ազգային-քաղաքական շահերի արտահայտողն ու պաշտպանը, չուներ նման գործունեության համար անհրաժեշտ գիտելիքներ ու փորձառություն։ Այդ պայմաններում Նուբար փաշայի նման հմուտ դիվանագետի, եվրոպական երկրների ամենաբարձրաստիճան ղեկավարների հարգանքը և բարեկամությունը վայելող մի մարդու մասնակցությունը Բեռլինի կոնգրեսում կարող էր միայն նպաստել հայկական պատվիրակության արդյունավետ գործունեությանը։ Սակայն, հայ եկեղեցականները հրաժարվեցին նրա ծառայությունից, թերևս, այն պատճառով, որ մինչ այդ Նուբար փաշան անմասն էր հայ ազգային-քաղաքական կյանքին։ Նման դիրքորոշումը

---

8 Տ. Գևորգյան, Նուբար փաշա, Պետական մարդը և արդարության ոհմակիրը (Արև, 5. IV. Կահիրե, 1976), Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, Փարիզ, 1929, էջ 308։

9 Տ. Գևորգյան, նշվ. աշխ.։

վառ օրինակն է սոցիալ-քաղաքական ակնկալումների վերաբերյալ վերոհիշյալ դրույթի։ Միևնույն ժամանակ այս դեպքը պարզորոշ ցույց է տալիս տզգային պարտականությունների մասին եղած սխալ պատկերացումները։ Առնըվազն անլուրջ կլիներ ակնկալել, որ Եգիպտոսի ամենաբարձրաստիճան պետական գործիչն ու դիվանագետը իր մշտական և անմիջական մասնակցությունը բերեր մի գործի, որը չուներ ոչ հստակ ծրագիր, ոչ էլ ճանաչված ղեկավարություն։ Այլ բան էր միջազգային վեհաժողովը, որի մասնակիցները իսկապես օժտված էին ժողովուրդների, այդ թվում նաև հայ ժողովրդի, գոյավիճակը փոփոխելու համար իրավական միջոցներով, և ուր նա կարող էր կամ համենայն դեպս կչանար կիրարկել դիվանագետի իր ողջ փորձը, իր անձնական ծանոթությունները՝ ի նպաստ հայ ժողովրդի շահերի։ Սա մի գերխնդիր էր, որի դրական լուծման դեպքում, այն կդառնար իր կյանքի «աստեղային ժամը»։ Իսկ ինչպիսին էր Նուբար փաշայի վարկը այդ օրերին։ Դրա մասին է վկայում այն փաստը, որ Բեռլինի վեհաժողովի բացումից մոտ երեք ամիս անց նա գլխավորեց Եգիպտոսի առաջին կառավարությունը։ Ինչևէ, Նուբար փաշան Բեռլին չգնաց և մինչև իր կյանքի վերջին օրերը «հոգիին խորքը պահեց այդ մերժման դառնությունը»։ Այս դեպքը, որը ինքնին հետաքրքրական է և բնութագրում է այդ ժամանակաշրջանի հայ քաղաքական գործելակերպը, ոչ պակաս կարևորություն է ստանում, եթե հիշենք, որ 1878 թ. Նուբար փաշայի որդին՝ Պողոս Նուբարը արդեն 27-ամյա երիտասարդ, հազիվ թե բավարարվածություն զգար՝ տեսնելով նման անվստահությունը հոր նկատմամբ։ Պողոս Նուբարը, սակայն, չդրեց հավասարության նշան առանձին անհատների, կազմակերպությունների (որքան էլ նրանք հեղինակավոր լինեին) և մի ամբողջ ժողովրդի միջև։ Իսկ թե որքան դյուրին էր դա անել, վկայում է Ա. Զոպանյանի օրինակը, որն այդ նույն դեպքերի առիթով գրել է. «...որքան ցավալի սխալ մը գործած է մեր ազգը...», «...հակառակ այն դառնության զոր ազգը իրեն պատճառած էր...», և նույնիսկ այսպես՝ «...բայց հայ ժողովուրդին հանցանքը այդ պարագային ոչ այնչափ այդ ծրագիրը, որչափ նույն իսկ անձնական միջամտությունը մերժած ըլլալն է այդ մարդուն...»[10]։ Ամբողջ ազգի և Կ. Պոլսի Ներսես պատրիարքի ու նրա խորհրդականների նման անհիմն նույնացումը ևս մեկ մասնավոր օրինակ է քաղաքական մշակույթի բացակայության, որի բացասական հետևանքները ճակատագրական եղան իր՝ հայ ժողովրդի համար։

Հենց այդ գիտակցությամբ էլ Պողոս Նուբարը առաջնորդվեց իր հետագա ողջ կյանքում։ Իսկ պատասխանների շարքում, անկասկած, ամենակարևորը եղավ Հայ Բարեգործական Ընդհանուր Միությունը, որը նա հիմնեց 1906 թ. ապրիլի 15-ին, Եգիպտոսի մայրաքաղաք Կահիրեում։

Իսկ ովքե՞ր էին մյուս հիմնադիրները և իրենց ո՞ր արժանիքների համար էր, որ Պողոս Նուբարը ցանկացավ համագործակցել նրանց հետ։

«ՀԲԸ Միության Կեդրոնական Վարչության ամենեն պատկառելի դեմքն է, եթե ոչ ամենեն տիրականը, Ն. Վ. Յագուպ Արթին փաշան, որ հիմնարկեքի առաջին օրեն՝ կաթոգին հոգածությամբ մը քայլ առ քայլ հետևած է Միության աշխատանքին, և օրենքի ու գիտության մարդու կրկնակ զգրաղանց բծախնդրությամբ մը հսկած է անոր կանոնադրական ուղղության ու հիմնական սկզբունքներուն անթերի և անխոտոր կիրարկումին»[11]։ Սրանք լոկ բառեր չեն. ծանոթանալով Յագուպ Արթինի մասին ժամանակակիցների հիշողություններին, համոզվում ես, որ նա իսկապես «...ազնվական հայու տիպարն էր, որ շուրջը պատկառանք կ'ազդեր»[12]։

Յագուպ Արթինը (Հակոբ Արթին փաշա Զրաքյան, Եգիպտոսի արտաքին գործոց նախարար, Արթին բեյ Զրաքյանի որդին) ծնվել է Կահիրեում, 1842 թ.։

Փարիզի Մխիթարյանների Սամուել-Մուրադ վարժարանում հայեցի կըր-

---

10 Վ. Զարդարյան, Հիշատակարան, էջ 21—61։

11 ՀԲԻՄՈ, էջ 40։

12 Վ. Մալեզյան, Ճամփուս ծայրը, հ. Ա, Փարիզ, 1954, էջ 304։

թություն և դաստիարակություն ստանալուց հետո, նա ուսումը շարունակում է եվրոպական (Ֆրանսիա, Գերմանիա, Անգլիա) համալսարաններում՝ մասնագիտանալով պատմության, գրականության և լեզվաբանության բնագավառներում։ 1873 թ. Յագուպ Արթինը հրավիրվում է Եգիպտոս և Իսմայիլ փաշայի որոշմամբ դառնում նրա զավակների՝ իշխան Իբրահիմ Հիլմիի և Մահմուդ Ֆուադի (որը 1919 թ., երբ Յագուպ Արթինը մահացավ, Եգիպտոսի սուլթանն էր) դաստիարակ-հսկիչը, իսկ հետագայում Իսմայիլ փաշայի անձնական քարտուղարը։ Սկսած 1880 թ. նա ամենաբարձր պաշտոններ է զբաղեցնում երկրի պետական հիմնարկներում (պետական խորհրդական, երկաթուղու վարչության ընդհանուր տնօրեն և այլն)։ 1883 թ. Յագուպ Արթինը Կրթության նախարարության փոխնախարարն էր և այդ պաշտոնը վարեց մոտ 23 տարի։ Վերջինս առավել համապատասխանում էր իր գիտելիքներին ու նախասիրություններին և պատահական չէ, որ նրա գործունեությունն այս բնագավառում եղավ շատ արդյունավետ։

Մասնավորապես նա «...կը կազմակերպե Եգիպտոսի նախակրթարանները և երկրորդական վարժարանները, ինչպես նաև բարձրագույն դպրոցներու կրթական մակարդակը կը բարելավե և կըլլայ հիմնադիրը Գահիրեի պետական ուսուցչանոցին և վերակազմողը Գահիրեի Արհեստից և Արվեստից վարժարաններուն...»[13]։ Այսուհանդերձ, իր ամենակարևոր նախասիրությունը գիտությունն էր, որին նվիրում էր իր բոլոր ազատ ժամերը։ «Իր կյանքը իմաստունի մը, հարատև և անխոնջ ուսումնասիրողի մը կյանքն է, որ մեծ մասամբ կանցնի իր հոյակապ մատենադարանն ներս, դիրքերու և ձեռագիրներու մեջ խորասուզված։ ...Կըսեն թե Նորին վսեմություն գիտնականներու ընտանիք մը կազմած է, թե իր իմաստնափայլ կինն ու դուստրն ամեն օր՝ իրեն հետ երկար ժամեր կը հսմենան իր շքեղ գրատան մեջ...»[14]։ Նրա հրապարակումները, միջազգային գիտաժողովներում ներկայացված զեկուցումները, ինչպես նաև մի շարք գիտական ընկերությունների հիմնադրումն ու ղեկավարումը եվրոպական համբավ և ճանաչում բերեցին նրան։ Մասնավորապես, 1906 թ. Սբ. Պետերբուրգի, իսկ 1911 թ. Սենտ-Անդրեաս (Շոտլանդիա) համալսարանները նրան շնորհեցին պատվավոր դոկտորի կոչում։ Կարելի է ենթադրել, որ այս ամենից հետո ոչ ժամանակ և ոչ էլ ուժ պետք է մնար ազգային գործունեության համար։ Սակայն Յագուպ Արթինը պատվավոր տեղ ունի նաև եգիպտահայերի պատմության մեջ։ Նա էր, որ կազմակերպեց տեղի հայ կաթոլիկների համայնքը, պատրաստեց նրա սահմանադրությունը և ապահովեց ճանաչում՝ կառավարության կողմից։ Յագուպ Արթին փաշա այն է եգիպտահայ կաթոլիկ հասարակության համար, ինչ որ Պողոս փաշա Նուբար՝ մեր (հայ առաքելական համայնքի—Մ. Է.) մեջ, լռելյայն, հասկցված, ընդունված, նվիրագործված Ազգապետ մը»[15]։

Տրամաբանական է և օրինաչափ, որ խիստ անհատականությամբ օժտված այս մարդիկ, որոնք ի դեպ ապրում էին հարևանությամբ, ոչ միայն հին բարեկամներ էին, այլև «...ձեռք-ձեռքի տված հիմնեցին ՀԲՄՄ՝ Պողոս Նուբարը որպես նախագահ, իսկ Յագուպ Արթինը՝ փոխ-ատենապետ»։ Յագուպ Արթինի ընդգրկումը ՀԲՄՄ հիմնադիրների կազմում ուներ նաև մեկ այլ կարևոր նշանակություն՝ այն մարմնավորումն էր Միության կանոնագրքի այն սկզբունքային հիմնադրույթի, ըստ որի նրան կարող էր անդամակցել ամեն հայ՝ առանց որևէ, մասնավորապես դավանանքի, խտրականության։ Պողոս Նուբարի և Յագուպ Արթինի համագործակցությունը չսահմանափակվեց ՀԲՄՄ-ով, հետագայում, 1913 թ., Պողոս Նուբարի առաջարկությամբ Յ. Արթինը ստանձնեց Հայ ազգային պատվիրակության անդամի պաշտոնը և, չնայած իր տարիքին, մեկնեց Փարիզ՝ նվիրվելով հայ ժողովրդի պատմական իրավունքների պաշտպանության գործին։ Յագուպ Արթինը մահացավ 1919 թ.։

---

13 Ա. Հ. Գարտաշյան, նշվ. աշխ., հ. Բ, Վենետիկ-Ս. Ղազար, 1986, էջ 244։

14 ՀԲՄՄ, էջ 41։

15 Նույն տեղում։

Նրա հուղարկավորությունը, որին մասնակցեցին Եգիպտոսի սուլթանի ներկայացուցիչը, վարչապետը, նախարարները, դեսպանները, ինչպես նաև բազմաթիվ հայ կազմակերպություններ, ևս մեկ ապացույց էր մեծ ու համընդհանուր հարգանքի, որ նա վայելեց իր ողջ կյանքի ընթացքում։

ՀԲԸՄ մյուս փոխատենապետն էր Օրվանդ Աղաթոնը։ Նա, անկասկած, ուրույն տեղ է գրավում «հրաշալի տասնյակում», որը ոչ միայն եղավ Միության հիմնադրման նախաձեռնողներից մեկը, մասնակցեց հիմնական կանոնագրքի ստեղծմանը, այլև իր հետագա ողջ կյանքը նվիրաբերեց ՀԲԸՄ-ին։ ՀԲԸՄ ընդհանուր տնօրեն Վ. Մալեզյանը, որն ընդհանրապես շատ զուսպ է արտահայտվել իր գործընկերների մասին, այսպես է բնութագրել Ե. Աղաթոնին. «Ոչ ոք, ոչ իսկ Պողոս Նուպար, ունեցավ Աղաթոնի չափ «օրհնյալ հուրը», որ միշտ կը բռնկեր, որ միշտ կը բոցավառվեր Բարեգործականի սիրովը։ Արդարև, ավելի քան հավատք մը, խոր պաշտամունք ուներ Միության համար, և կարելի է առանց չափազանցության ըսել, թե երբեմն իր ընտանիքեն անգամ կը նախադասեր Բարեգործականը»[16]։

Օրվանդ Աղաթոնի հայրը՝ Գրիգոր Աղաթոնը, որին նա կորցրեց 8 տարեկան հասակում, հասարակ հողագործի զավակ էր, որը, սակայն, դարձավ Օսմանյան կայսրության առաջին քրիստոնյա նախարարը և Ազգային Սահմանադրության հիմնադիրներից մեկը։ Հետաքրքրական է, որ Ե. Աղաթոնը 1873—75 թթ. հաճախել էր Նուպար-Շահնազարյան վարժարանը, որի հիմնադիրն էր Պողոս Նուբարի հայրը։ Սա առաջին, առայժմ անուղղակի առընչությունն էր այդ ընտանիքի հետ, որը հետագայում Աղաթոնի համար դառնալու էր ամենամեծ սրբություններից մեկը։ Հետևելով իր հոր օրինակին՝ նա բարձրագույն կրթություն է ստանում Փարիզի Գրինիոնի երկրագործական վարժարանում, որն ավարտելուց հետո մեկ տարի աշխատում է Ֆրանսիայի հարավում, որպես երկրագործ։ 1889 թ. վերադառնալով Թուրքիա, վարում է տարբեր պաշտոններ, այդ թվում՝ Կ. Պոլսի երկրագործության ընդհանուր քննիչ, Կայսերական ագարակների քննիչ, Երկրագործական բանկի վարչական խորհրդի անդամ և այլն։ 1896 թ., երբ Կ. Պոլսում և Օսմանյան կայսրության ամբողջ տարածքում կազմակերպվեցին հայերի զանգվածային կոտորածները, Աղաթոնը հեռանում է երկրից և վերադառնում Փարիզ։ Այստեղ նա ծանոթանում է Պողոս Նուբարի հետ, որի հրավերով էլ 1897 թ. գնում է Եգիպտոս, ուր ծավալում է աշխույժ գործունեություն։ Տարիներ շարունակ մեծ հաջողությամբ նա վարում է Պողոս Նուբարի, եգիպտահայ այլ խոշոր դրամատերերի, ինչպես նաև Եգիպտոսի իշխանների ագարակների կառավարչի կամ քննիչի պաշտոնները։ Ինքը՝ Աղաթոնը իր «Կենսագրական նոթերում» այսպես է արժեքավորում այդ տարիները. «Եգիպտոսի բազմաթիվ օտարազգի հողագետներու մեջ միակ հայ հողագետն էի, որ հաջողեցա «Եգիպտոսի հողագործներու Միություն» (Յունիոն տը լ'Ակրիքյուլթյուր տ'Էժիբթ) անվան ներքո ընկերակցություն մը հաստատել, որուն գործոն ատենապետությունը վարեցի ամբողջ 4 տարի և որմե վերջն ալ մինչև հիմա կը մնամ անոր պատվակալ նախագահը..., ...մինչև իմ Եգիպտոս հաստատվիլս, քիմիական պարարտանյութերու գործածությունը, նույն իսկ անոր անունն անգամ երկրին մեջ ծանոթ չէր... Հոն կատարած զանազան փորձարկություններես, երկար ու մանրազնին ուսումնասիրություններես ետքն է որ, քիմիական աղբերու գործածության օգտակարությանը համոզված՝ անոր ընդհանրացման մեծապես սատարեցի և այս կերպով ալ երկրին հարստության աճումին լայնորեն նպաստած եղա...»[17]։

Իր կյանքի այդ ժամանակահատվածում Աղաթոնը այնքան է նվիրվում իր ընտրած մասնագիտությանը, որ, ըստ էության, անմասնակից է մնում ազգային գործունեությանը, որոշ ժամանակ անց միայն, նա հետզհետե ներ-

16 Վ. Մալեզյան, նշվ. աշխ., էջ 307։

17 Ե. Գ. Աղաթոն, Գաղափարի նշխարներ (Կենսագրական նոթեր, Մարսել, 1934, էջ 297—298)։

գրավվում է այդ ասպարեզում։ Թե ինչ ազդակների ազդեցության ներքո էր տեղի ունեցել այդ շրջադարձը, ինքը՝ Աղաթոնը, համեստորեն լռում է։ Դժվար չէ ենթադրել, սակայն, որ դրանում մեծ դեր էին խաղացել թե՛ եգիպտահայ համայնքի աշխույժ ազգային գործունեությունը և թե՛ Պողոս Նուբարը, որի հետ Աղաթոնի հանդիպումներն անհրաժեշտաբար հաճախակի էին։ Ինչպես նշվում էր Աղաթոնի 75-րդ տարեդարձի առիթով հրատարակած կենսագրականում, «Իր ազգային կյանքը կը սկսի գլխավորաբար Եգիպտոսի մեջ, իբրև ազգային երեսփոխան և ժողովական, Պողոս Նուբարի կողքն ի վեր»[18]։ Բայց, անկասկած, նրա ազգային գործունեության հիմնական ասպարեզը դարձավ ՀԲԸՄ։ Նրա ջանքերի շնորհիվ հիմնվեցին ՀԲԸՄ մի շարք մասնաճյուղեր Եվրոպայի երկրներում, նրա քարոզչության արդյունք էին Բարեգործական անունով ձևակերպված մեծագումար կտակները։ Այդ նույն նպատակին էին ծառայում Աղաթոնի գրած բազմաթիվ հոդվածները, որոնցում նա մատչելի ձևով պարզաբանում էր Միության նպատակը, խնդիրները, դժվարությունները, հաջողությունները։ Կարելի է համաձայնել Վ. Մալեզյանի հետ, որ Երվանդ Աղաթոնը «...իր ազգասիրությունը, իր հայրենասիրությունը շփոթելով ՀԲԸ Միության հետ, ձուլվելով անոր մեջ, և անոր մեջեն միայն ուզելով տեսնել իր ազգը և իր հայրենիքը, զոր անշուշտ հոգևին կը սիրեր, և որոնց օգտակար ըլլալու հարմարագույն միջոցը, ամենեն գործնական խողովակը կը համարեր սակայն Միությունը»[19]։

ՀԲԸՄ հիմնադիրներից ամենատարեցը Գրիգոր Եղիայանն էր, որն առաջինը կնքեց իր մահկանացուն 1911 թ.՝ Բարեգործականի հիմնադրումից ընդամենը 5 տարի անց։ Նա ծնվել է 1833 թ. Կահիրեում։ Կրթությունը ստանալուց հետո (Կահիրեի Ս. Աստվածածին Եկեղեցու դպրատուն, Համիլթընի անգլիական վարժարան, Ecole des Langues), նա որոշ ժամանակ աշխատեց որպես փաստաբան և այդ ընթացքում «...կարևոր ծառայություններ մատուցած է Ազգային առաջնորդարանին, զանազան դատերու առթիվ, շնորհիվ իր օրենսգիտական հմտության և ամենաբարձր հարաբերությանց՝ զոր մինչև վերջ մշակած է եգիպտական ավագանիին հետ»[20]։ Սակայն նրա գործունեության հիմնական ասպարեզը եղավ դիվանագիտությունը։ Չկարողանալով պաշտոն ստանալ Եգիպտոսի արտաքին գործոց նախարարությունում՝ իր ազգային պատկանելության պատճառով, նա աշխատանքի է անցնում Ռուսաստանի հյուպատոսարանում։ Սկսելով որպես թարգման, 1880 թ. Գրիգոր Եղիայանը ստանձնում է փոխհյուպատոսի պաշտոնը։ Նա իր ժամանակի ամենահմուտ դիվանագետներից էր, դրա վկայությունն է, մասնավորապես, այն, որ նա պարգևատրվել էր մի շարք երկրների՝ Ռուսաստանի, Իտալիայի, Օսմանյան կայսրության, Պարսկաստանի, Եգիպտոսի և այլնի պետական շքանշաններով։ Իր հեղինակությամբ նա մեծապես նպաստեց ՀԲԸՄ հաջող գործունեությանը, մասնավորապես, տարբեր երկրների հյուպատոսարանների միջոցով Արևմտյան Հայաստանի բնակչությանը Բարեգործականի նպաստները փոխանցելու գործում։ Բայց ահա թե ինչ է գրել Գրիգոր Եղիայանի վերջին տարիների մասին ժամանակակիցը. «Մեր անձնական մեկ տեսակցության մեջ կյանքեն ձանձրացած էր, հիվանդ էր և բան չէր կարող ուտել, կյանքը դառն էր իրեն համար հակառակ իր ճոխության, մանավանդ իր աչքերը լեցան, երբ հիշեց իր վաղամեռիկ աղջիկը։ Կը խորհեր նոր կտակ մ'ալ ընել ի նպաստ որբերու՝ Հ.Բ.Ը. Միության ձեռք և որպեսզի հաստատուն հիմերու վրա դրվի, Ֆրանսայեն բերել տված էր ժառանգական խնդիրներու վրա խոսող գիրքեր, որոնցմով կը զբաղեր»[21]։ Սակայն մահը հասավ ավելի շուտ։ Նա վախճանվեց 1911 թ. մայիսին, Տրիեստում։ Նրա մեծագումար

18 75-րդ տարեդարձ Երվանդ պեյ Աղաթոնի (1860—1934), Փարիզ, 1934, էջ 3։
19 Վ. Մալեզյան, նշվ. աշխ., էջ 308։
20 ՀԲԸՄՈ, էջ 72։
21 Վահան Զարդարյան, Հիշատակարան, էջ 16—36. 17—37։

կտակի հիմնական մասը հատկացված էր Կահիրեի Ազգային առաջնորդարանին, Գալուստյան վարժարանի շրջանավարտներին՝ ի նպաստ եվրոպական համալսարանում ուսանելու և այլն։ Հատուկ գումար էր հատկացվել նաև Կահիրեում հայկական եկեղեցի կառուցելու նպատակով, որն իրականացավ 1927 թ., երբ տեղի ունեցավ նորակառույց Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու օծումը։ Սակայն Գ. Եղիայանի մահից անմիջապես հետո և հետագայում շատերին է հետաքրքրել մեկ հարց. ինչո՞ւ նա, լինելով ՀԲԸՄ հիմնադիրներից մեկը, չէր կտակել Միությանը որևէ գումար։ Այդ հարցին դեռևս 1911 թ. պատասխանել է ՀԲԸՄ հայտնի գործիչ Վահան Քյուրքճյանը, որի շնորհիվ ի հայտ է գալիս Գ. Եղիայանի անհատականության ևս մեկ կողմ՝ նրա ազգային ինքնագիտակցության առանձնահատկությունը. «Անոր համոզումն էր, թե Եգիպտոսի հայը պետք չէ առատաձեռն ըլլա օտարերկրյա հայերուն համար, և թե ամեն քաղաք՝ իր տեղվույն աղքատն ու որբը միայն պետք է հոգա... Բարեգործության մասին իր ըմբռնումները շատ տարբեր էին մերիններեն։ Անիկա եգիպտացի մըն էր, հայ լեզվին ու հայ մամուլին գրեթե օտար (թեև հաճույքով կը ցուցներ Վենետիկի վանքեն առած գրքերը), և ուզեց, որ Եգիպտոսի հայ ուսանողը միայն օգտվի իր կտակեն, անոր հայությունը եկեղեցիեն ժառանգ մնացած էր իրեն և ուզեց, որ եկեղեցին պայծառանա իրմով, ու եկեղեցին ժառանգե իր կտակին մեծ մասը»[22]։

Գ. Եղիայանը միակ արհեստավարժ դիվանագետը չէր ՀԲԸՄ հիմնադիրների կազմում։ Դիվանագիտական ծառայության քառասուն տարվա փորձ ուներ նաև Կարապետ Շերիտճյանը, որը զգալի դեր խաղաց ինչպես Միության ստեղծման, այնպես էլ գործունեության առաջին շրջանում։ Հայերը, լինելով ազգային փոքրամասնություն, զուրկ էին, ինչպես նշվեց, քաղաքական մշակույթից, որի բաղկացուցիչ տարրերից է, մասնավորապես, պաշտոնական հաղորդակցման, շփումների մասին գրված և չգրված օրենքների իմացությունն ու կիրարկումը։ Կ. Շերիտճյանը, որպես բազմափորձ դիվանագետ, լավագույնս տիրապետելով այդ արվեստին, հավելյալ որակ և փայլ էր հաղորդում Միության գործունեությանը։ Այս ունակությունը շատ բնական ձևով ներդաշնակ էր Կ. Շերիտճյանի անհատականությանը։

«Կենցաղագետ մարդ է ան գերազանցապես, և բառին ազնիվ իմաստով՝ կենցաղասեր մարդն ալ, այսինքն անոնցմե, որոնք ապրելու արվեստը արթիմթի պես գործ կը դնեն, որոնց ապրումին վայելչությունը երբեք չիշնար, չի զիջանիր եսական գռեհիկություններու, այլ որոնք իրենց եսին պաշտամունքը (le culte du moi) կը մշակեն բարձրորեն, գեղեցկություն, պայծառություն փնտրելով ու տարածելով իրենց շուրջ»[23]։ Եվ տրամաբանական էր, որ «դպրության և աբվեստներու» սիրահար Կ. Շերիտճյանը հոժարակամ ստանձնեց Բարեգործականի գրադարանապետի պաշտոնը՝ գրադարանին նվիրելով իր արժեքավոր և ընտիր գրքերի անձնական հավաքածուն։

Հայտնի է, որ որևէ հիմնարկության գործունեությունը անհրաժեշտաբար թելադրում է համապատասխան վարչական ծառայության գոյությունը։ Ծայտուն անհատականությունների (որոնց թվին կարելի է դասել ՀԲԸՄ վերոհիշյալ հիմնադիրներին) խառնվածքին ընդհանրապես խորթ էր վարչական աշխատանքը, որը միշտ մնում է ստվերում։ Սակայն վարչական մեքենայի գործունեությունից է կախված և նրանով է պայմանավորված յուրաքանչյուր հիմնարկության արդյունավետ գործառումը։ Պողոս Նուբարը ՀԲԸՄ հիմնադրելիս ոչ միայն գիտակցում էր դրա կարևորությունը, այլև, ինչպես ցույց տվեց հետագա պատմությունը, կատարեց շատ հաջող ընտրություն՝ վստահելով նորաստեղծ կազմակերպության վարչական ծառայության ղեկավարումը Մ. Անդրանիկյանին, իսկ ավելի ուշ՝ Վ. Մալեզյանին։ Դեռևս 1878 թ.

---

22 Վ. Քյուրքճյան, Գրիգոր Եղիայան, Եգիպտահայ կտակարարը (Կոչնակ, 12. VIII. 1911, էջ 770)։

23 ՀԲԸՄՌ. էջ 65։

Վ. Մելիքյանը Կ. Պոլսից տեղափոխվել էր Կահիրե՝ Պողոս Նուբարի հրավերով և որոշ ժամանակ անց ստանձնել նրա ֆինանսական և առևտրական գործերի կառավարչի (վեքիլ) պաշտոնը։ Այդ ընթացքում նա այնքան բարձր մասնագիտական կարողություններ էր դրսևորել, որ Պողոս Նուբարը անհրաժեշտ դտավ նրան ընդգրկել ոչ միայն Միության հիմնական կանոնագրքի խմբագրական, այլև հիմնադիրների կազմի մեջ։ Այս հատկությամբ էր օժտված նաև Մ. Անդրանիկյանը։ «Ամեն մարդ ավելի կամ նվազ չափով պչրանք մը կդնե ինքզինք հաճելի, համակրելի ընծայելու համար՝ իրեն հետ հպումի եկողներուն։ Անդրանիկյանը ժխտական հանգամանք մը ունի կարծես։ «Չէ» ըսելու ձև մը կա, որ դիմացինիդ մեջ կը մեղմացնե, տանելի, հանդուրժելի կընծայե մերժումի մը մորմոքը։ «Կը ցավիմ, սիրելիս. շատ կը ցավիմ, որ չեմ կրնարի» պես պարապ խոսքերով որքան դյուրին է մարդ մը ճամփու դնել... Բայց Անդրանիկյանի խառնվածքը կը խորշի այս պայմանադրական կեղծիքեն։ Իր «ոչ կարեմ»ը կտրուկ ու վերջնական շեշտ մը ունի, որ վարանումի, տատանումի տեղի չի ձգեր և հույսին բոլոր դռներն ու հորիզոնները կը գոցե խնդրարկուին առջև»[24]։ Կենտրոնական վարչական ժողովում, որը ՀԲՄ գերագույն մարմինն էր, Անդրանիկյանի պարտականությունները շատ լայն էին։ Ինչպես ասվեց, վարչական ծառայությունների աշխատանքը, որպես կանոն, անհայտ է մնում թե՛ ժամանակակիցների և թե՛ հետագա սերունդների համար, ուստի նորից դիմենք «Ոսկեմատյան»-ին. «Հ.Բ.Ը. Միության Կեդրոնին մեջ յոթը տարիե ի վեր իր ստանձնած ու խղճի մտոք կատարած դերը-առանց չափազանցելու կրնանք ըսել-կենսական նշանակություն ունի այս հաստատության համար։ Տիար Մ. Անդրանիկյան Բարեգործականին կեդրոնական վարչության այն անդամն է, որ տարին 365 օր շարունակ զբաղած է Միության վարչական գործառնություններովը։ Միության մեծագործություններու համբավումին մեջ իր անունը չի գար հաճախ հնչել ականջներուն։ Ժեսթերու և փառավորումներու մարդ չէ ան։ Բայց ինքն է, որ ժողովներու, հավաքումներու և հանդեսներու պանծալի մթնոլորտեն դուրս, գրասենյակին լռության ու մեկուսացմանը մեջ, օրը օրին, կը դարձնե Միության կնճռոտ և բազմապահանջ մեքենան»[25]։

Իր ժողովրդին ծառայելու գիտակցությամբ նույնչափ օժտված էր նաև Նազարեթ Տաղավարյանը, որը, սակայն, նախընտրեց այլ գործելակերպ։ Ն. Տաղավարյանը միակն էր ՀԲՄ հիմնադիր անդամներից, որի թեկնածությունը առաջարկել էր ոչ թե Պողոս Նուբարը, այլ Երվանդ Աղաթոնը։ Կարելի է ասել, որ նա նաև միակն էր, որ քաջածանոթ էր արևմտահայ ազգային կյանքին։ Ն. Տաղավարյանը ՀԲՄ կենտրոնական վարչական ժողովի առաջին ատենադպիրն ու ընդհանուր-քարտուղարն էր։ Չնայած այդ պաշտոնում նա աշխատեց ընդամենը երկու տարի, այնուամենայնիվ, կարողացավ լրիվ կերպով դրսևորել իր կազմակերպական ու դիտական ունակությունները։ Երբ 1908 թ. հռչակվեց Օսմանյան սահմանադրությունը, և կայսրության ազգային փոքրամասնությունները թվում էր, թե դարձան հասարակության իրավահավասար անդամներ, Ն. Տաղավարյանը հրաժարվեց իր պաշտոնից և մեկնեց Կ. Պոլիս, ուր իր կարևոր մասնակցությունը բերեց ազգային և պետական գործունեությանը։ Նա այստեղ էլ շարունակեց ծառայել ՀԲՄ որպես Կ. Պոլսի մասնաճյուղի ատենադպիր։ Դեպի երկրի հայաշատ շրջանները կատարած իր ուղևորությունների ընթացքում նա հիմնեց ՀԲՄ բազմաթիվ նոր մասնաճյուղեր և ապահովեց նրանց համագործակցությունը Կենտրոնական վարչության հետ։ 1913 թ. Ն. Տաղավարյանին նվիրված հոդվածում կարդում ենք. «...Այն սերունդեն է, որ եթե պայքարի ու անձնազոհության հերոսներ չի տվավ ազգին, խաղաղ զարգացման մեկ քանի արժանավոր ռահվիրաներ արտադրեց և ասոնց կարգին իր տեղն ունի, ապահովաբար, տոքթ. Ն. Տաղա-

24 Նույն տեղում, էջ 55։

25 Նույն տեղում։

վարյանը»[26]։ Ինչ իմանար հեղինակը, որ ընդամենը երկու տարի անց «խաղաղ զարգացման ռահվիրա» Ն. Տաղավարյանը դառնալու էր «անձնազոհության հերոս»՝ սպանվելով Ցուոք ցեղասպանների ձեռքով։

Մկրտիչ Մարկոսոֆ բեյը ծնվել էր 1849 թ. Տրիեստում (Ավստրիա)։ Նրա հայրը՝ Դանիել Մարկոսոֆը Նուբար փաշայի քեռայրն էր։ Մկրտիչ Մարկոսոֆը Ֆրանսիայում ստանալով բարձրագույն կրթություն՝ ճարտարապետ-երկրաչափի մասնագիտությամբ, 1863 թ. տեղափոխվում է Եգիպտոս և անցնում աշխատանքի հանրային շինությունների նախարարությունում, որպես քննիչ-ճարտարապետ։ ՀԲԸՄ հիմնադրվելուց հետո նա Կենտրոնական վարչության անդամ էր և իր մատուցած ծառայությունների համար առաջիններից մեկը դարձավ Բարեգործականի պատվո անդամ։ 1907—1912 թթ. Մարկոսոֆը Կահիրեի Աղքատախնամ ընկերության ատենապետն էր։ Նա իր մահկանացուն կնքեց 1919 թ., Կահիրեում[27]։

ՀԲԸՄ հիմնադիրներից ամենաերիտասարդը Պողոս Նուբարի որդին՝ 25-ամյա. Առաքել Նուբարն էր, Կենտրոնական վարչության առաջին գանձապետը։

Հովհաննես Հակոբյան՝ Եգիպտոսի ներքին գործոց նախարարության դիվանատան բարձրաստիճան պաշտոնյա, Կահիրեի հայ համայնքի Ազգային քաղաքական ժողովի անդամ։ ՀԲԸՄ հիմնադիրների ցուցակում այս մարդու անունը միշտ վերջում է նշվում։ Հ. Հակոբյանը եղավ միակը հիմնադիրներից, որ կարճ ժամանակ անց հրաժարվեց Կենտրոնական վարչության անդամի պաշտոնից և այլևս երբեք չհամագործակցեց Միության հետ։ Դժվար է դա բացատրելը։ Պողոս Նուբարի անհաջող ընտրությա՞մբ, նախարարությունում իր գրաված պաշտոնի և Միության անդամ լինելու անհամատեղելիությա՞մբ, թե՞ կար մեկ այլ, մեզ անծանոթ պատճառ։

Ահա այս անձերն էին, որ Պողոս Նուբարի գլխավորությամբ հիմնադրեցին Հայկական Բարեգործական Ընդհանուր Միությունը։ Նրանք շատ տարբեր էին, տարբեր էին տարիքով, կենսափորձով, գաղափարներով և այլ հատկանիշներով։ Բայց և այնպես, կարելի է նկատել սկզբունքային բնույթի որոշ ընդհանրություններ։ Նախ, հարկ է նշել, որ նրանք բարձրակարգ մասնագետներ էին՝ ֆինանսիստներ ու գործարար մարդիկ, դիվանագետներ ու գիտնականներ, բժիշկներ ու գյուղատնտեսներ, մասնագիտություններ, որոնք երաշխավորում էին ապահով կյանք՝ ցանկացած երկրում, ցանկացած ազգային միջավայրում և դրանով իսկ կանխորոշում այդ մասնագիտությունների տեր մարդկանց կողմից իրականության, հատկապես հայ իրականության առավել իրապաշտ, պրագմատիկ ընկալումը։ Այդ առումով հատկանշական է և ոչ պատահական, որ հիմնադիրների կազմում բացակայում էին գրողներ, որոնք թե այդ շրջանում և թե հետագայում, ինչպես սփյուռքում, այնպես էլ Հայաստանում, մեծ եռանդով զբաղվեցին ազգային-քաղաքական գործունեությամբ՝ չունենալով դրա համար անհրաժեշտ ունակություններ ու դիտելիքներ։

Հիմնադիրների վերոհիշյալ մասնագիտությունները արդյունք էին եվրոպական կրթական հաստատություններում (կամ նմանօրինակ տեղական հաստատություններում) ուսանելու, որի շնորհիվ նրանք ոչ միայն ճանաչել էին զարգացման ավելի բարձր աստիճանի վրա կանգնած ժողովուրդների պատմությունն ու մշակույթը, այլև հստակեցրել իրենց գաղափարները հայ ժողովրդի զարգացման ցանկալի ուղիների վերաբերյալ։

ՀԲԸՄ ձևավորման պահին հիմնադիրներից և ոչ մեկը հայ քաղաքական որևէ կազմակերպության անդամ չէր (որոշ ժամանակ անց միայն նրանցից ոմանք՝ Ե. Աղաթոնը, Մ. Անդրանիկյանը, Ն. Տաղավարյանը կդառնան Սահմանադիր Ռամկավար կուսակցության անդամ)։ Շնորհիվ դրան, ապահովվեց նրանց անաչառ գործունեությունը՝ ի շահ ողջ հայ ժողովրդի։

---

26 Նույն տեղում, էջ 92։

27 Ա. Հ. Գարտաշյան, նշվ. աշխ., հ. Բ, էջ 253։

Հիշատակության է արժանի նաև այն հանգամանքը, որ հիմնադիրներից մի քանիսը, ինչպես Պողոս Նուբարը, Յագուպ Արթինը, Գևորգ Եղիայանը, գրեթե չէին տիրապետում հայերենին։ Այդ ժամանակաշրջանում, երբ հայ ժողովրդի ճնշող մեծամասնությունը ապրում էր իր հայրենիքում, տարբեր երկրների հայ համայնքներում, հայերենի իմացության հարցը դեռ չէր դարձել հատուկ քննարկման առարկա, ուստի անհեթեթություն կլիներ կարծել, թե Պողոս Նուբարը նախապատվություն էր տվել հայերենին չտիրապետող անձանց։ Սակայն այդ վերջինների գործունեությունը ՀԲԸՄ հիմնադրման առաջին իսկ օրերից, կամա թե ակամա ևս մեկ ապացույց է այն դրության, որ ազգային փոքրամասնությունների պարագայում մայրենի լեզվին տիրապետելը և ազգային ինքնագիտակցությունն ու գործունեությունը փոխպայմանավորված երևույթներ չեն։ Փոխպայմանավորված են անհատի ազգային ինքնագիտակցությունն ու հայրենասիրությունը, «հոգուտ հայրենի հողին հավատարիմ մնացած հայ ժողովրդին» գործելը, ինչի վառ օրինակը եղան տասը կահիրեաբնակ հայերը՝ Պողոս Նուբարի գլխավորությամբ։

ЛИЧНОСТЬ И ОБЩЕНАЦИОНАЛЬНЫЕ ИНТЕРЕСЫ

(Основатели Армянского Всеобщего Благотворительного Союза)

Э. Л. МЕЛКОНЯН

Резюме

Армянский Всеобщий Благотворительный Союз (АВБС), основанный в 1906 г. в Каире, является старейшим среди ныне действующих армянских организаций подобного рода. Созданный в целях помощи проживающим на родине—в Западной Армении, входящей в состав Османской империи,—армянам, АВБС после геноцида и депортации армян в годы первой мировой войны продолжил свою деятельность в различных общинах армянской диаспоры. После полувекового запрета АВБС возобновил свою деятельность на территории нынешней Армении в 1989 г.

Инициатором основания АВБС и его первым председателем был Погос Нубар, известный египетский государственный деятель, крупный предприниматель и финансист, инженер-изобретатель. Его соратники—Ягуб Артин, М. Маркософ, К. Шеритчян, Н. Тагаварян, Аракел Нубар, М. Андраникян, А. Акопян, Ерванд Агатон, Г. Егиаян представляли просвещенную элиту египетских армян. Их усилиями стало возможным основание беспрецедентной для армянской действительности по масштабам своей деятельности благотворительной организации, отмечающей в этом году свое 90-летие.